ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2017 թվականի N 224-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՐԴՈՒ ՊԱՊԻԼՈՄԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՆՀ-728 հրամանագրի 1.17-րդ կետի «բ» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 2912-Ա հրամանը՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ *(այսուհետ՝ **ՄՊՎ**)* պատվաստումների ներդրման գործընթացի, այդ թվում նաև հանրային իրազեկման աշխատանքները լիարժեք կազմակերպելու և իրականացնելու համար համակարգող խորհուրդ *(այսուհետ՝ **խորհուրդ**)*:

2. Հաստատել խորհրդի կազմը և գործառույթները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի հոկտեմբերի 23
ք. Հրազդան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 224-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԱՆՇՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

1) ***Վահագն Ոսկանյան*** *- խորհրդի նախագահ՝* Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,

2) ***Արա Սիմոնյան*** - խորհրդի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ *(վարչության պետի պաշտոնակատար)*,

3) ***Գրիգորիս Օգյան*** - խորհրդի անդամ, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն *(համաձայնությամբ)*,

4) ***Մարի Տերտերյան*** - խորհրդի անդամ, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համաճարակաբան *(համաձայնությամբ)*,

5) ***Արուսյակ Նազարեթյան*** - խորհրդի անդամ, «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բժիշկ-համաճարակաբան *(համաձայնությամբ)*,

6) ***Մարինե Բարսեղյան*** - խորհրդի անդամ, «Ռուբիկ Հարությունյանի անվան Արզնիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պատասխանատու մանկաբույժ *(համաձայնությամբ)*,

7) ***Գայանարա Մանասերյան*** - խորհրդի անդամ, «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության իմունոլոգ *(համաձայնությամբ)*,

8) ***Ասպիկ Մարկոսյան*** - խորհրդի անդամ, «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ *(համաձայնությամբ)*,

9) ***Եվնա Լյուինա*** *- խորհրդի քարտուղար՝* Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ:

2. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1) *ՄՊՎ*-ի դեմ պատվաստումների ներդրման միջոցառումներ և հաշվետվությունների պարբերաբար ներկայացում մարզպետին,

2) Մասնագետների խմբի ձևավորում պատասխանատու մանկաբույժների, գինեկոլոգների, «Հիվանդությունների կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության իմունականխարգելման գործընթացի պատասխանատուների մասնակցությամբ,

3) Մասնագիտական խմբի միջոցով բուժաշխատողների համար խորհրդակցությունների *(դպրոցներում, բուժհաստատություններում)* կազմակերպում և իրականացում,

4) Հանրային իրազեկման աշխատանքների կազմակերպում և իրականացում մարզերում՝ տեղական զանգվածային լրատվամիջոցների միջոցով: